


# ՕՏԱՐՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՀՐԱՀՐԵԼ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ

Posted on February 25, 2011 by Keghart



Առաջին  
Լուր ամսագրի մասին

Category: [Opinions](#)





Թագուհի Հակոբյան, [Առաջին Լրատվական](#), 25 Փետրվար 2011

«Առաջին լրատվականի» գրուցակիցն է «Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամ, Շուշիի առանձնակի գումարտակի նախկին հրամանատար, ՀԱԿ անդամ Ժիրայր Սեֆիյանը:



**- Պարոն Սեֆիյան, փետրվարի 18-ի հանրահավաքում, որն աչքի էր ընկնում մարդաշատությանը, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը կանխատեսեց, որ հուսահատության եզրին հասցված ժողովուրդը կարող է թքած ունենալ թե՛ Հայ ազգային կոնգրեսի կարծիքի, թե՛ Ղարաբաղի վրա, և որ Սերժ Սարգսյանի մուլթարաքացու մամանակի հարց է ընդամենը: Ըստ Ձեզ՝ հնարավո՞ր է նման սցենար:**



Թագուհի Հակոբյան, [Առաջին Լրատվական](#), 25 Փետրվար 2011

«Առաջին լրատվականի» գրուցակիցն է «Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամ, Շուշիի առանձնակի գումարտակի նախկին հրամանատար, ՀԱԿ անդամ Ժիրայր Սեֆիյանը:



**- Պարոն Սեֆիյան, փետրվարի 18-ի հանրահավաքում, որն աչքի էր ընկնում մարդաշատությանը, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը կանխատեսեց, որ հուսահատության եզրին հասցված ժողովուրդը կարող է թքած ունենալ թե՛ Հայ ազգային կոնգրեսի կարծիքի, թե՛ Ղարաբաղի վրա, և որ Սերժ Սարգսյանի մուլթարաքացու մամանակի հարց է ընդամենը: Ըստ Ձեզ՝ հնարավո՞ր է նման սցենար:**

- Համեմատությունը, որ կարող են թքած ունենալ ՀԱԿ-ի կարծիքի և Արցախի վրա, ես համարում եմ անտեղի: Եթե ՀԱԿ-ի հասցեին հնչում են երբեմն անհարիր քննադատություններ, ապա Արցախի հարցում դա անթույլատրելի է, որովհետև մեր ժողովուրդը միշտ սրբությամբ է վերաբերվել հայրենիքին: Համամիտ եմ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ այն հարցում, որ ժողովրդի համբերության բաժակը լցվել է և կարող է մի օր դուրս հորդել: Ամբողջ իսկյորն այն է, որ պոռթկումը, որը լինելու է մի օր, հանգեցնի արժեհամակարգի փոփոխության:

**- Դուք միշտ եղել եք արմատական գործողությունների կողմնակից: ՀԱԿ-ը բազմիցս կոչ է արել, որ բոլոր ընդդիմադիր ուժերը միավորվեն: Կարծում եք՝ առանց ընդդիմադիր ուժերի միավորման հնարավո՞ր է հասնել իշխանափոխության:**

- Մենք (նկատի ունի «Սարդարապատ» շարժումը) միշտ հայտարարել ենք, որ կողմնակից ենք ոչ ընտրությունների միջոցով հասնելու իշխանափոխության: Մենք ոչ միայն կոչեր ենք հղել ընդդիմադիր ուժերին, այլև՝ ամենօրյա աշխատանք ենք տարել՝

ապացուցելու, որ ճիշտ ճանապարհը ընտրությունների միջոցով իշխանափոխության գնալը չէ, որովհետև, միևնույն է, դրանք կեղծվում են: Արաբական աշխարհում տեղի ունեցող գործընթացները, կարծում եմ, բոլորին համոզեցին, որ բռնապետներից ազատվելու ճիշտ ճանապարհը ամենևին էլ ընտրությունները չեն: Արաբները հենց փողոցում էին որոշում, թե իրենց հաջորդ քայլերը որոնք պետք է լինեն բռնապետներին տապալելուց հետո: Մենք նույնպես պետք է մտածենք, թե բռնապետներին տապալելուց հետո ինչ ուղի ենք ընտրելու, որը մեզ կտանի դեպի ժողովրդավար երկիր: Այսինքն՝ ի տարբերություն մեր արաբ եղբայրների, հայերը գոնե այս անգամ պարտավոր են կատարվող իրադարձություններից դասեր քաղել, վաղօրոք պատրաստվելով գործելու ավելի խոհեմ... Մենք դեմ ենք անվերահսկելի գործընթացներին, որը կարող է կա՛մ արդյունք չտալ, կա՛մ էլ չծառայել իր նպատակին: Ուստի՝ պետք է հազար անգամ չափել, մեկ անգամ կտրել:

**- Մեր երկրում, ի տարբերություն Եգիպտոսի, ձևավորվել է ինստիտուցիոնալացված ընդդիմություն, որը նաև կառույցներ է ստեղծում մարզերում, կատարում է որոշակի աշխատանք:**

- Մեծ հաշվով, իրավիճակը երկու երկրներում էլ շատ չի տարբերվում: Արաբական աշխարհի երկրներում էլ բռնապետներն այնպես են արել, որ գոյություն չունենա ընդդիմություն կամ էլ այն գտնվի մարգինալացված վիճակում: Ես կարծում եմ, որ մեզ մոտ էլ քաղաքական դաշտը առողջ չէ: Եթե իշխանությունները կտրված են ժողովրդից, ապա ընդդիմությունն էլ անցած տարիների ընթացքում չի խոսել ժողովրդի սրտից և չի գործել ժողովրդի ցանկություններին համապատասխան: Ի դեպ, Եգիպտոսում էլ գործում է «Իսլամական եղբայրները», որը կայացած կազմակերպություն է և ունի իր դերակատարությունը: Նրան էլ էին Եգիպտոսի իշխանությունները մարգինալացրել՝ թույլ չտալով մտնել խորհրդարան:

**- Ի՞նչ նկատի ունեք, երբ ասում եք, որ ժողովրդի սրտից չեն խոսում ընդդիմադիր ուժերը:**

- Ե՛վ 2003թ., ե՛լ 2008թ. ընտրություններին մասնակցելը արդարացված էր միայն ժողովրդին մոբիլիզացնելու տեսանկյունից: Քանի որ ժողովուրդը զրկված է իր քվեից, ուղիղ ժողովրդավարություն հաստատելու ձևը մնում է ժողովրդի՝ փողոցում հավաքվելը և իշխանափոխության հասնելը: Դա մինչ օրս տեղի չունեցավ ընդդիմության սխալ մարտավարության պատճառով: Ես նկատի չունեմ, որ դա պետք է տեղի ունենար Մարտի 1-ին, քանի որ իշխանություններն անընդհատ բախումներ էին հրահրում և փորձում էին կատարվածի պատասխանատվությունը գցել նրա վրա: Սակայն եթե հաջորդող օրերին, ասենք՝ մարտի 3-ին կամ 4-ին հայտարարվեր, որ ժողովուրդը պետք է հավաքվի որևէ տեղում, ես չեմ կասկածում, որ շատ մեծ բազմություն կհավաքվեր: Եվ այդ դեպքում, համոզված եմ, որ իշխանությունները տեղի

Էին տալու: Նրանք հասկացել էին, որ ոճիր են գործել և վախենում էին ժողովրդի արդար ցասումից: Մարտի 1-ի դեպքերից հետո մի շարք ընդդիմադիր գործիչներ մեկնել էին Վրաստան: Այստեղից հարցում էին արել Վրաստանի իշխանություններին, որպեսզի նրանց բռնեն և վերադարձնեն: Պարզվել էր, որ փախածներից տասից ինը իշխանամետներ էին՝ օլիգարխները և նրանց մերձավորները: Ժողովրդի զենքից հզոր զենք գոյություն չունի, և այդ զենքը կարող է դյուրին կերպով տապալել ե՛լ թույլ, ե՛լ շատ հզոր բռնապետների: Հայաստանի իշխանություններին չի հաջողվել ստեղծել այնպիսի համակարգ, որը պաշտպանի իրենց, ինչպես, օրինակ, արել է Լիբիայի նախագահ Քադաֆին: Ես կարծում եմ, որ բանակն ու ոստիկանությունը Հայաստանում կգտնվեն ժողովրդի կողքին:

**- Օրերս Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչը հայտարարել էր, որ երբ քաղաքացիական հասարակությունը գործելու քաջություն է ունենում, այն կարող է սարեր շուռ տալ: Դեսպանը նաև նշել էր, որ հասարակական ակտիվությունը հայրենասիրության ամենամեծ դրսևորումն է: Ըստ Ձեզ՝ սա չի՞ նշանակում արդյոք, որ Արևմուտքը քաղաքացիական ակտիվության բավարար ռեսուրս է տեսնում Հայաստանում և հարկ եղած դեպքում աչք չի փակի իշխանությունների գործած ապօրինությունների և բռնությունների վրա:**

- Ես չեմ կարծում, որ ամեն մի հասարակական ակտիվություն կարելի է համարել հայրենասիրություն: Մենք շատ վտանգավոր օրեր ենք ապրում: Վտանգը նրա մեջ է, որ որևէ օտար ուժ կարող է Հայաստանում հրահրել ապստամբություն: Եվ այդ առումով Հայաստանում ստեղծվել է բավականին պարարտ հող: Խոսքը տվյալ դեպքում միայն ԱՄՆ-ի մասին չէ: Ապստամբությունը պետք է լինի, սակայն դա պետք է իրականացվի միայն հայաստանակենտրոն ուժերի առաջնորդությամբ:

**- Իսկ հնարավոր համարո՞ւմ եք, որ կայանան քաղաքացիական անհնազանդության ակցիաներ: Հասարակությունը, որպես իշխանություններին մերժելու ձև, չի՞ կարող բոյկոտել օլիգարխներին պատկանող ապրանքներն ու ծառայությունները:**

- Մեր առաջարկած մարտավարության զինանոցում առկա է նաև այդ տարբերակը: Մենք կողմնակից ենք այն տարբերակներին, որոնք կիրականացնեն անցնում իշխանափոխություն: «Սարդարապատը» չի պատրաստվում գնալ արկածախնդրության ճանապարհով: Մենք շատ ուշադիր հետևում ենք արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին... Կարծում եմ, եթե ճիշտ կազմակերպվենք, մեզ կհաջողվի խուսափել արյունահեղությունից: Միաժամանակ եթե բռնապետը փորձի արյուն թափել, ապա «Սարդարապատը» չի ընկրկի... Այսօր կան մարդիկ, որոնք հայտարարում են, որ մենք ունենք Լեռնային Ղարաբաղի հարց, և պետք չէ անկառավարելի քայլեր անել: Ի՞նչ է նշանակում, թե ունենք Ղարաբաղ: Մենք նաև ունենք Սյունիք: Ոչ մի տարբերություն չկա, քանի որ Հայաստանն ինքը մի ճակատ է:

Եթե մենք կարճ ժամանակում չկարողանանք կատարել փոփոխություններ, մենք ոչ միայն Ղարաբաղը կկորցնենք, այլև՝ ողջ Հայաստանը: Դժբախտաբար, Արցախի հարցը շահարկում են ինչպես իշխանությունները, այնպես էլ՝ ընդդիմությունը:

